Զեկույց
Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար 2024թ. անցկացված բաց մրցույթի դիտարկման արդյունքները

Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

NED NATIONAL ENDOWMENT FOR DEMOCRACY
SUPPORTING FREEDOM AROUND THE WORLD

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական ավելի մեծ բարեփոխումների խթանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:
Դիտորդությունը և զեկույցի կազմումը իրականացրել է Դիանա Հարությունյանը:
Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
1. Մրցույթի նկարագրությունը 4
2. Ընդհանուր տեղեկություններ դիտարկված մրցույթի վերաբերյալ 6
3. Մրցույթի ընթացքը 8
3.1. Կենսագրական տվյալների ներկայացում 8
3.2. Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ հարցադրումներ 8
3.3. Մասնագիտական պատրաստվածության ստուգում 10
4. Մրցույթի արդյունքների ամփոփում և դրանց հրապարակում 13
5. Կազմակերպչական խնդիրներ 14
ԱՄՓՈՓՈՒՄ 14
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 15

ՆԱԽԱԲԱՆ

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից 2024 թվականին իրականացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու համար անցկացվող բաց մրցույթի դիտորդություն: Սեփական դիմումի հիման վրա ստանալով դիտորդի կարգավիճակ՝ Կազմակերպությունը դիտարկել է 2024 թվականի ապրիլի 5-ին կայացած ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով կազմակերպված բաց մրցույթը:

1. Մրցույթի նկարագրությունը

ՀՀ գլխավոր դատախազության պաշտոնական կայքէջում 18.01.2024 թվականին հրապարակվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի մասին հայտարարությունը:[1]

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով Գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովի կողմից անցկացվում է առանձին մրցույթ: Մրցույթն անցկացվում է հարցազրույցի միջոցով:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում Որակավորման հանձնաժողովը կազմված է տասնմեկ անդամից: Որակավորման հանձնաժողովի կազմի մեջ են մտնում գլխավոր դատախազի կողմից նշանակվող գլխավոր դատախազի մեկ տեղակալ, չորս դատախազ և չորս իրավաբան-

[1] Տե՛ս https://www.prosecutor.am/annoucement/3024

գիտնական, իսկ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի դեպքում՝ նաև երկու փորձագետ, որոնց նշանակում է գլխավոր դատախազը: Փորձագետները պետք է ունենան ապօրինի ակտիվների վերադարձի ոլորտում գիտական կամ պրակտիկ աշխատանքի կամ կոռուպցիոն հանցագործությունների քննության առնվազն երեք տարվա փորձառություն:[2]

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դատախազների թեկնածությունների ցուցակը համալրելու նպատակով անցկացվող բաց մրցույթին կարող է մասնակցել 22-ից մինչև 63 տարեկան Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին՝

1) որը Հայաստանի Հանրապետությունում ստացել է բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել են օրենքով սահմանված կարգով,

2) որը տիրապետում է հայերենին,

3) որի նկատմամբ չեն տարածվում սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սահմանափակումները:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար մրցույթին կարող է մասնակցել առնվազն երկու տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ ունեցող անձը:3Հանձնաժողովի նախագահը, մինչև մրցույթը սկսելը լուծում է հանձնաժողովի նիստի իրավազորության հարցը՝ ստուգելով Հանձնաժողովի անդամների ներկայությունը: Հանձնաժողովը իրավազոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի առնվազն 8 անդամ: Հարցազրույցն իրականացվում է յուրաքանչյուր հավակնորդի հետ առանձին: Հարցազրույցի ընթացքում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդին կարող է տալ առավելագույնը երկու հարց, սակայն ընդհանուր հարցերի քանակը

[2] Դատախազության մասին ՀՀ օրենք, հոդված 23, 3-րդ մաս:
[3] Դատախազության մասին ՀՀ օրենք, հոդված 33. 1:

պետք է լինի առնվազն 6-ը: Հարցերից առնվազն 2-ը պետք է վերաբերեն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումներին: Հարցին պատասխանելու համար հավակնորդի ցանկության դեպքում տրվում է ողջամիտ ժամանակ՝ պատրաստվելու համար: Յուրաքանչյուր հարցից հետո հարց տվող հանձնաժողովի անդամը հայտարարում է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի ճիշտ լինելու դեպքում նշում է ճիշտ պատասխանը:[4]

2. Ընդհանուր տեղեկություններ դիտարկված մրցույթի վերաբերյալ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակների համալրման նպատակով անցկացված մրցույթը տեղի է ունեցել 2024 թվականի ապրիլի 5-ին Գլխավոր դատախազության շենքում: Քննության մեկնարկի համար սահմանվել էր ժամը 12:00-ը, սակայն մրցույթի համար սահմանված ժամին Գլխավոր դատախազությունում և հարակից տարածքներում գրանցվել է էլեկտրաէներգիայի անջատում, որի արդյունքում քննությունը տեղափոխվել է նույն օրը՝ այլ ժամի: Մրցույթը մեկնարկել է ժամը 13:30-ին և ավարտվել 17:20-ին:

Հարցազրույցին մասնակցելու հնարավորություն ստացել են մրցույթին հայտ ներկայացրած 8 թեկնածուներ, սակայն հարցազրույցին մասնակցել են միայն 4 թեկնածուներ:[5] Մրցույթի նախնական ժամին մասնակիցների թիվը եղել է 6-ը, իսկ էլեկտրաէներգիայի անջատումից հետո հարցազրույցի նշանակված ժամին ներկայացել են 4 թեկնածուներ:
Մրցույթին մասնակցած բոլոր չորս թեկնածուները իգական սեռի ներկայացուցիչների էին: Նրանցից 3-ը մրցույթին մասնակցում էին առաջին անգամ, իսկ 1 թեկնածուն՝ երկրորդ անգամ:

[4] ՀՀ Գլխավոր դատախազ, հրաման 47, https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf
[5] ՀՀ Դատախազություն, Հայտարարություն «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի մասին, 18. 01. 2024թ. https://www.prosecutor.am/annoucement/3024

Մրցույթն իրականացվել է Որակավորման հանձնաժողովի հետևյալ կազմով.

- **Արթուր Պողոսյան** - հանձնաժողովի նախագահ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ
- **Էդգար Արսենյան -** հանձնաժողովի անդամ, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ
- **Արտակ Հարությունյան** - հանձնաժողովի անդամ, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ
- **Արմեն Մարուխյան** - հանձնաժողովի անդամ, ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ
- **Կարեն Հարությունյան** - հանձնաժողովի անդամ, ՀՀ զինվորական դատախազի տեղակալ
- **Տաթևիկ Սարուխանյան** - հանձնաժողովի անդամ, իրավաբանական գիտությունների թեկնածու
- **Տաթևիկ Սուջյան -** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)
- **Վիտալի Կասկո -** «Դատախազների միջազգային միության» գործադիր կոմիտեի անդամ, իրավաբանական փորձագետ

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի անդամ փորձագետ է նաև Սոնա Այվազյանը, ով դիտարկվող մրցույթին չի մասնակցել:

Մրցույթին փորձագետ անդամի մասնակցությունն ապահովվել է տեսակապի միջոցով: Մրցույթի ժամանակ միջազգային փորձագետի և թեկնածուների, հանձնաժողովի անդամների միջև հաղորդակցության համար ապահովվել համաժամանակյա թարգմանություն՝ ռուսերենից հայերեն և հայերենից ռուսերեն:

3. Մրցույթի ընթացքը

Բացելով նիստը՝ Հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ նիստը իրավազոր է, ինչից հետո մրցույթը սկսվել է և հերթականությամբ մրցույթի դահլիճ են հրավիրվել թեկնածուները:

Յուրաքանչյուր թեկնածուի հետ մրցույթի ընթացքը բաղկացած է եղել երեք հիմնական մասերից՝

3.1. Կենսագրական տվյալների ներկայացում

Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացվել են թեկնածուի կենսագրական տվյալները, ինչից հետո հանձնաժողովի անդամները անհրաժեշտության դեպքում հարցեր են ուղղել ներկայացված կենսագրական տվյալների առնչությամբ: Հարցերը հիմնականում վերաբերել են թեկնածուի աշխատանքային գործունեությանը, կատարված հիմնական գործառույթներին:

Բոլոր այն դեպքերում երբ անձինք ունեցել են դատական ներկայացուցչություն իրականացնելու ոչ մեծ փորձ միջազգային փորձագետի կողմից հարցեր են ուղղվել դրա վերաբերյալ:
Բոլոր 4 թեկնածուները մասնագիտությամբ իրավաբաններ են. մրցույթի ժամանակահատվածում թեկնածուներից մեկը աշխատում էր ՀՀ գլխավոր դատախազության վարչություններից մեկում՝ գլխավոր իրավաբանի պաշտոնում, մյուսը՝ Օպտիմուս Լեքս արբիտրաժային դատարանում, ինչպես նաև որպես անհատ ձեռներեց ծառայություններ էր մատուցել «Իրավունքի Եվրոպա» ՀԿ-ին, մյուս երկու թեկնածուներն աշխատում էին ՀՀ արդարադատության նախարարությունում:

3.2. Թեկնածուների բարեվարքության վերաբերյալ հարցադրումներ

Որակավորման հանձնաժողովի կողմից մանրամասն քննարկման առարկա է դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (հետայսու տեքստում՝ ԿԿՀ) կողմից տրված բարեվարքության եզրակացությունը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրված բարեվարքության ստուգման եզրակացության եզրափակիչ մասը: Թեպետ մրցույթին ներկայացած բոլոր 4 հավակնորդները ԿԿՀ-ի կողմից ստացել էին դրական

եզրակացություն, այնուամենայնիվ ԿԿՀ-ի կողմից բարձրաձայնված որոշ հարցերի պարզաբանման առնչությամբ Որակավորման հանձնաժողովի անդամները հարցադրումներ են կատարել: Բարեվարքության վերաբերյալ հարցադրումներ ներկայացրել է նաև միջազգային փորձագետը:

Թեկնածուների կենսագրության և բարեվարքության վերաբերյալ Որակավորման հանձնաժողովի անդամների հարցերը ներառել են, մասնավորապես.

- Բոլոր թեկնածուներին ներկայացվել են հարցեր նրանց աշխատանքային փորձի և պարտականությունների, նախկինում դատարանում ներկայացուցչության փորձի առկայության վերաբերյալ, թեկնածուներից մեկին հարցադրումներ են ներկայացվել նաև որպես անհատ ձեռներեց իրականացված գործունեության փորձի և բնույթի առնչությամբ:
- Թեկնածուների կողմից ձեռք բերված գույքի և դրա ֆինանսական աղբյուրների վերաբերյալ, այդ թվում՝ ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի առնչությամբ: Թեկնածուներից մեկի դեպքում հարցը վերաբերել է վերջինիս անունով անշարժ գույքի ձեռքբերմանը, երբ վերջինս դեռևս ուսանող է եղել:
- Թեկնածուներին նաև հարցադրումներ են ներկայացվել ընտանիքի անդամների եկամուտների հայտարարագրման բացերի և անհամապատասխանությունների վերաբերյալ,
- Ընտանիքի անդամի գույքի և դրա ֆինանսական աղբյուրների վերաբերյալ,
- Թեկնածուների ընտանիքի անդամի զբաղեցրած պաշտոնի վերաբերյալ և թեկնածուի ընտրության և նշանակման դեպքում հնարավոր շահերի բախման հնարավորությունների վերաբերյալ,
- Թեկնածուներից մեկին հարցադրում է արվել, թե արդյո՞ք ակտիվ է սոցիալական ցանցերում,
- Թեկնածուներից մեկին հարցադրումներ են ուղղվել, թե ինչպիսի վարորդ է, խախտումների և այլ հարցերի վերաբերյալ,

Թեկնածուներին տրվել են նաև տեսական հարցեր, օրինակ՝

- արդյո՞ք դատախազը կարող է նվերներ ստանալ,

- արդյո՞ք կոռուպցիան ինչ որ ձևով հնարավոր է արդարացվել
- արդյո՞ք թեկնածուն երբևէ առնչություն ունեցել է կոռուպցիոն գործերի հետ և այլն:

Ի պատասխան Կազմակերպության հարցմանը ԿԿՀ-ի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող բաց մրցույթի մասնակցության հայտ ներկայացրած թվով 8 թեկնածուներից 7-ի վերաբերյալ Հանձնաժողովը ներկայացրել է դրական, թվով 1-ի վերաբերյալ՝ դրական՝ վերապահումով եզրակացություն: Թվով մեկ դրական՝ վերապահումով եզրակացության համար հիմք են հանդիսացել թեկնածուի՝ գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված մրցույթին մասնակցած բոլոր 4 թեկնածուների վերաբերյալ Հանձնաժողովը տրամադրել է դրական եզրակացություն:
Պատասխան գրությամբ, միաժամանակ, տեղեկացվել է, որ որոշ դեպքերում Հանձնաժողովը մտահոգություններ է ունեցել Թեկնածուների հավանական շահերի բախման առնչությամբ, ուստի առաջարկել է թեկնածուներին առաջադրել հարցադրումներ նաև դրա վերաբերյալ, ստանալ պատասխաններ և ինքնուրույն գնահատել դրա հնարավոր ազդեցությունը վերջիններիս մասնագիտական գործունեության վրա:[6]

3.3. Մասնագիտական պատրաստվածության ստուգում

Մրցույթի վերջին փուլում ստուգվել է թեկնածուների մասնագիտական պատրաստվածությունը: Մասնագիտական գիտելիքները ստուգվել են «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի

[6] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի պատասխան գրություն թիվ 01/1473-2024:

համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցաշարի հիման վրա, որը նախապես հասանելի է եղել թեկնածուներին: Այս փուլում թեկնածուներին տրվել են մասնագիտական հարցեր ինչպես հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, այնպես էլ որոշ անդամների կողմից երկուական հարցի տեսքով: Բոլոր հարցերը նախապես հրապարակված հարցաշարից են եղել, որոնք հնչեցվել են ըստ հարցաշարում նշված հարցերի համարների, որից հետո հարցերը ընթերցվել են:

Թեկնածուներին ուղղված հարցերը եղել են՝

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ավարտումը հաշտության համաձայնությամբ,
- Ապացույցների հասկացությունը, ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ապացուցման առանձնահատկությունները,
- Հայցային վաղեմություն,
- Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը,
- Հաշտության համաձայնությունը,
- Ուսումնասիրության ընթացքում կեղծ հայտարարագիր ներկայացնելու քրեաիրավական բնութագիրը,
- Հակամրցակցային գործունեության քրեաիրավական բնութագիրը,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը,
- Նախադատելի փաստերը քաղաքացիական դատավարությունում,
- Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները,
- Ժառանգությունն ըստ օրենքի և ըստ կտակի,
- Երրորդ անձանց հասկացությունը,
- Փողերի լվացման քրեաիրավական բնութագիրը,

- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը,
- Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում,
- Հայցի ապահովումը,
- Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը և օտարումը.
- Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում:

Հանձնաժողովի կողմից թեկնածուներին ուղղված հարցերը հիմնականում տարբեր են եղել, միայն մեկ հարց է տրվել երկու թեկնածուների, որը վերաբերել է Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելուն և դրա հիմքերին: Մրցույթին թեկնածուների մասնագիտական գիտելիքները ստուգելու համար, որակավորման հանձնաժողովի կողմից հարցերը հնչեցվել են համապատասխան հարցաշարից՝ որակավորման հանձնաժողովի նախագահի և անդամների ընտրությամբ, ինչը կարող է ենթադրյալ կողմնակալության ռիսկեր պարունակել որևէ թեկնածուի նկատմամբ:

Հանձնաժողովի կողմից հավակնորդների պատասխանները գնահատվել են՝ ճիշտ, մասնակի ճիշտ, սխալ, մասնակի սխալ: Հավակնորդի յուրաքանչյուր տրված պատասխանից հետո հարց տվող հանձնաժողովի անդամը հայտարարել է պատասխանի ճիշտ կամ սխալ, մասնակի ճիշտ կամ մասնակի սխալ լինելը, իսկ սխալ կամ մասնակի ճիշտ լինելու դեպքում նշում է ճիշտ պատասխանը:
Թեկնածուներին ուղղված հարցերի քանակը եղել է տարբեր: Մասնավորապես մեկ թեկնածուի տրվել է 6 հարց, մեկ թեկնածուի՝ 7 հարց, մեկ թեկնածուին՝ 8 հարց, համապատասխանաբար մյուս թեկնածուին՝ 9 հարց:
Այսպես՝

- Թեկնածուներից մեկին հանձնաժողովի կողմից հնչեցվել է 9 հարց, որոնցից 4-ին, ըստ հանձնաժողովի անդամների,թեկնածուն պատասխանել է մասնակի ճիշտ, 3 հարցի սխալ, 1 հարցի ճիշտ, 1 հարցի մասնակի սխալ:
- Հաջորդ թեկնածուին ուղղված հարցերի թիվը 8-ն է, որոնցից 2-ին թեկնածուն տվել է մասնակի ճիշտ պատասխան, 2-ին՝ մասնակի սխալ, 2-ին՝ սխալ, և 2 հարցի ճիշտ պատասխան:

- Հաջորդ թեկնածուին ուղղված հարցերի թիվը եղել է 6-ը, որից 3-ին թեկնածուն պատասխանել է սխալ, 2 հարցի մասնակի սխալ, 1 հարցի մասնակի ճիշտ պատասխան:
- Թեկնածուներից մյուսին հնչեցվել է 7 հարց, որից 6-ին, ըստ հանձնաժողովի անդամների, թեկնածուն պատասխանել է ճիշտ, մեկին՝ մասնակի սխալ:

4. Մրցույթի արդյունքների ամփոփում և դրանց հրապարակում

Համաձայն ՀՀ Գլխավոր դատախազի 23.05.2020 թվականի 47-րդ հրամանի 6-րդ մասի 36-րդ կետի՝ «Հանձնաժողովը տվյալ օրվա բոլոր թեկնածուների հետ հարցազրույց իրականացնելուց հետո քննարկում է յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ եզրակացություն տալու հարցը, որի ժամանակ Հանձնաժողովի անդամները կարող են արտահայտել իրենց կարծիքը»: Նույն հրամանի 6-րդ մասի 37-րդ կետի՝ «Սույն կարգի 36-րդ կետում նշված քննարկումը դռնփակ է և չի ձայնագրվում»:[7] Քննարկումն ավարտելուց հետո Հանձնաժողովի նախագահը քվեարկության է դնում յուրաքանչյուր թեկնածուի վերաբերյալ դրական եզրակացություն տալու հարցը:
Հանձնաժողովի նախագահը, մրցույթի քվեարկության ավարտից հետո հարցազրույցի անցկացման սենյակ է հրավիրում թեկնածուներին, որտեղ բարձրաձայն ընթերցում է բոլոր եզրակացությունները:

Դիտարկման արդյունքներով՝ հարցազրույցի ավարտից հետո դռնփակության պայմաններում քննարկվել է թեկնածուների՝ մրցույթը հաղթահարելու հարցը, ինչից հետո թեկնածուները և հասարակական կազմակերպության ներկայացուցիչը հրավիրվել են դահլիճ:

Ընթերցելով եզրակացությունները, հանձնաժողովի նախագահը նշել է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը՝ նշելով եզրակացության դրական կամ բացասական լինելը: Այսպիսով, մրցույթին մասնակցած 4 թեկնածուներից 3-ին Հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն և մեկ թեկնածուի՝ դրական

[7] Տե՛ս https://www.prosecutor.am/storage/orders/orders_215_1685023080.pdf

եզրակացություն: Հանձնաժողովի նախագահի կողմից նշվել է, որ բոլոր թեկնածուների քվեարկությունը հանձնաժողովի կողմից եղել է միաձայն:

Որակավորման հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացել էառավելագույն ճիշտ պատասխաններ ներկայացրած թեկնածուն, ով Գլխավոր Դատախազության վարչություններից մեկի աշխատակից է: Անհրաժեշտ է նշել, որ ընտրված թեկնածուի նշանակման մասին առկա չէ հանրային տեղեկություն:

5. Կազմակերպչական խնդիրներ

Գործնականում թեկնածուների կենսագրությունների վերաբերյալ տեղեկատվությունը չի հրապարակվում Գլխավոր դատախազության պաշտոնական կայքէջում:

Մրցույթի թեկնածուների համար առանձնացված սպասասրահ չի նախատեսվել, թեկնածուները սպասել են միջանցքում, որը համապատասխան կահավորում չի ունեցել և հարակից սենյակներից բերվել են աթոռներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցազրույցին մասնակցելու հնարավորություն ստացել էին 8 թեկնածուներ, որոնցից 4-ը մասնակցել են հարցազրույցին:
- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթին հանձնաժողովի կազմում մասնակցել է միջազգային փորձագետը,
- Դիտարկված մրցույթի բոլոր թեկնածուները ստացել էին բարեվարքության դրական եզրակացություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից:
- Որակավորման հանձնաժողովի կողմից քննարկման առարկա են դարձել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության եզրակացություններով բարձրացրած հարցադրումները և մտահոգությունները: Մրցույթի ընթացքում հարցեր է բարձրաձայնել նաև միջազգային փորձագետը:

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող մրցույթի հարցաշարից հարցերը ընտրվել և հնչեցվել են թեկնածուներին Որակավորման հանձնաժողովի անդամների կողմից:
- Մրցույթը հաղթահարել է հարցերին առավելագույն ճիշտ պատասխաններ ունեցող թեկնածուն, ով աշխատել է Գլխավոր դատախազության վարչություններից մեկում՝ որպես գլխավոր իրավաբան:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վերանայել որակավորման մրցույթի կազմակերպման ընթացքն ու պահանջները և նախատեսել նոր ընթացակարգ: Վերջինս նախատեսել երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Գրավոր փուլում իրավիճակային խնդրի հիման վրա գնահատել դիմորդի մասնագիտական պատրաստվածությունը, վերլուծական միտքը, մտքերը գրագետ շարադրելու կարողությունը: Գրավոր փուլը հաղթահարած թեկնածուներին հրավիրել բանավոր փուլի: Վերջինիս նպատակը պետք է լինի ծանոթանալ թեկնածուի հաղորդակցության, մտքերի բանավոր և համոզիչ արտահայտելու հմտություններին, անձնային որակները ճանաչելուն, բարեվարքության ստուգման արդյունքների քննարկմանը և այլն:
- Օրենքով սահմանել, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքություն ստուգում անցնում են այն թեկնածուները, ովքեր հաղթահարել են մրցույթի գրավոր փուլը և կմասնակցեն բանավոր փուլին:
- Մրցույթը կազմակերպելիս ուշադրություն դարձնել դրա կազմակերպման տեխնիկական կողմին՝ ապահովելով պատշաճ պայմաններ թեկնածուների մասնակցության համար: Միաժամանակ, թեկնածուներին բանավոր փուլին հրավիրել այնպիսի ողջամիտ հերթականությամբ, որի պայմաններում կբացառվի հարցազրույցին 1 ժամից ավելի սպասելու պրակտիկան:
- Թեկնածուների կենսագրությունների վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հրապարակել Գլխավոր դատախազության պաշտոնական կայքէջում:

- Վերանայել թեկնածուների մասնագիտական կարողությունների ստուգման փուլի ընթացքում հարցերի ընտրության կարգը՝ ներդնելով թեկնածուների կողմից հարցատոմսեր ընտրելու մեխանիզմ: